Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը Թվինինգ Ծրագրի միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

Առաքելության զեկույց

Գյուղատնտեսության համատարած հաշվառում

Գործունեություն Դ4.2

Վերապատրաստման Սեմինար Գյուղատնտեսության Համատարած հաշվառման վերաբերյալ

Առաքելությունը իրականացրել է
Ռոլֆ Սելանդերը, Շվեդիայի Վիճակագրություն

Հայաստան, Սեպտեմբերի 22-24, 2011

Տարբերակ 1 ին, նախագիծ

National Statistical Service
Republic of Armenia

Statistics Denmark

Հեղինակի անունը, հասցեն և էլ. փոստի հասցեն

Ռոլֆ Սելանդեր
SE-701 89 Örebro
Շվեդիա
Հեռ: +46 1917 6627
rolf.selander@scb.se

Բովանդակությունների ցանկ

Ամփոփ նկարագիր
1. Ընդհանուր մեկնաբանություններ
2. Գնահատում և արդյունքներ
3. Եզրակացություններ և առաջարկներ
4. Հաջորդ գործունեությունից առաջ իրականացվող առաջադրանքներ (Դ.3)

Զեկույցի հավելվածներ
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք
Հավելված 2. Առաքելության ծրագիր
Հավելված 3. Անձինք, որոնց հետ հանդիպումներ են տեղի ունեցել
Հավելված 4. Վերապատրաստման սեմինարի մամուլի հաղորդագրություն, 23-24 Սեպտեմբերի, 2011
Հավելված 5. Վերապատրաստման սեմինարի ծրագիրը, 23-24 Սեպտեմբերի, 2011
Հավելված 6. Հարցեր և պատասխաններ վերապատրաստման սեմինարի խմբակային քննարկումների վերաբերյալ
Հավելված 7. Բաղադրիչ Դ-ի՝ Գյուղատնտեսության համատարած հաշվառում, աշխատանքային ծրագիր

Այլ հավելվածներ, որոնք կազմվել են զեկույցի համար (շնորհանդեսներ վերապատրաստման սեմինարին ներկայացնելու համար)
Հավելված Դ4.2.8 պրն. Մնացականյանի կողմից ներկայացված շնորհանդես
Հավելված Դ4.2.9 Թոմաս Բիի կողմից ներկայացված շնորհանդես
Հավելված Դ4.2.10 Ռոլֆ Սելանդերի կողմից ներկայացված շնորհանդես
Հավելված Դ4.2.11 Մայքլ Ստայների կողմից ներկայացված շնորհանդես
Հավելված Դ4.2.12 Արսեն Ավագյան 1
Հավելված Դ4..2.13 Արսեն Ավագյան 2
Հավելված Դ4.2.14 Հակոբ Բաղալյան
Հավելված Դ4.2.15 Աիդա Աչինյան

Հապավումների ցանկ

ԳՀՀ	Գյուղատնտեսության համատարած հաշվառում
ՀԴ	Հայկական դրամ
ՇԵ	Շահառու Երկիր
ԵՄ	Եվրոպական Միություն
ԱՊ	Անդամ Պետություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճակագրական ծառայություն
ԲՄ	Բնակչության Մարդահամար
ԹՄԽ	Թվինինգի Մշտական Խորհրդատու
ԱՄՆԳԴ	ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտ

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Սույն առաքելության զեկույցը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) շրջանակներում: ԵՄ <<Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական ծառայությանը>> Թվինինգ ծրագրի Բաղադրիչ 4 ի շրջանակներում սա թվով երրորդ առաքելությունն էր և նվիրված էր Գյուղատնտեսության Համատարած հաշվառման մեթոդաբանության մշակմանը և նախապատրաստմանը:

Առաքելության նպատակները հետևյալն էին՝

Վիճակագրության տարածքային գրասենյակներին, մարզային գործակալություններին ակտիվորեն ներգրավել Գյուղատնտեսության Համատարած հաշվառման պլանավորման և իրականացման հետագա գործընթացներում: Սա հնարավոր եղավ իրականացնել երկօրյա վերապատրաստման սեմինարի միջոցով, որին մասնակցում էին ներկայացուցիչներ բոլոր 11 տարածքային գործակալություններից: Ավելին, գործունեությունը նպաստեց նաև սույն բաղադրիչի աշխատանքային ծրագրի արդիականացմանը, ինչպես նաև հնարավորություն ընձեռնվեց քննարկել Գյուղատնտեսության Համատարած հաշվառման հետ կապված կարևոր հարցերը ՇԵ փորձագետների հետ:

ԱՊ փորձագետը ցանկանում է իր խորին երախտագիտությունը հայտնել այն բոլոր պաշտոնատար անձանց և անհատներին, որոնց հետ հանդիպումներ է ունեցել՝ վերջիններիս բարյացակամ աջակցության և արժեքավոր տեղեկատվության համար, որը ցուցաբերվեց իրեն Հայաստանում գտնվելու ընթացքում և մեծապես նպաստեց իր աշխատանքին:

Սույն զեկույցում նշված տեսակետները և դիտողությունները պատկանում են ԱՊ փորձագետին և դրանց համապատասխանությունը Դանիայի Վիճակագրության կամ Շվեդիայի վիճակագրության տեսակետների հետ բոլորովին պարտադիր չէ:

2. Գնահատում և արդյունքներ

2.1 Ընդհանուր նկարագիր սեմինարի վերաբերյալ

Սեմինարի հիմնական նպատակն էր ներգրավել վիճակագրության տարածքային գրասենյակներին (մարզային մակարդակում) Գյուղատնտեսության համատարած հաշվառման (ԳՀՀ) պլանավորման գործընթացում: Տարածքային մակարդակը զգալի դեր պետք է ունենա ԳՀՀ բոլոր քայլերում: Յուրաքանչյուր մարզից սեմինարին մասնակցում էին երկուական աշխատակիցներ ՀՀ ԱՎԾ –ի կենտրոնական գրասենյակի Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի աշխատակազմի հետ միասին:

Սեմինարը բաղկացած էր հիմնականում չորս մասից՝

- ԳՀՀ պլանավորման ներկայիս իրավիճակը
- ԵՄ և այլ միջազգային փորձը կապված ԳՀՀ հետ
- Հայաստանում փորձնական ԲՄ –ի հետ կապված փորձը
- Խմբակային քննարկումներ որոշակի հարցերի վերաբերյալ, որոնք կարևոր են ԳՀՀ հաջող իրականցման համար

2.2 ԳՀՀ պլանավորման ներկայիս իրավիճակը

ԳՀՀ պլանավորումը սկսվել է դեռևս 2005 թվականից: Համատարած հաշվառման օրենքը ընդունվել է 2008 թվականի Նոյեմբերի 27-ին, որտեղ հստակեցված է, որ ԳՀՀ իրականացումը ՀՀ ԱՎԾ-ի պատասխանատվությունն է և հավաքագրված տվյալները կարող են օգտագործվել միայն վիճակագրական նպատակներով: ԳՀՀ պլանավորման մեջ աջակցություն է ցուցաբերում ԱՄՆ ԳԴ և 2011 թվականից ի վեր մինչ այժմ նաև ընթացիկ Թվինինգ ծրագիրը:

Կազմակերպչական կառուցվածքը, որը ներկայացված է ստորև սահմանում է տարբեր պարտականությունների և առաջադրանքների շրջանակ տարածաշրջանային և կենտրոնական մակարդակում:



5,800 հաշվային տեղամասեր

Տվյալների ամբողջ հավաքագրումը կիրականացվի 5,800 հաշվարարների միջոցով: Յուրաքանչյուր հարցազրույց կարձանագրվի փաստաթղթում: Որակը հիմնականում ապահովված կլինի հաշվարարներին տրամադրվող հրահանգների և ուսուցման /վերապատրաստման միջոցով:

1,160 հրահանգչական տեղամասեր

Այստեղ պետք է հավաքագրվեն թղթային հարցաթերթիկները, և հրահանգիչը կիրականցնի արդյունքների որակի որոշակի համակարգված ստուգումներ:

116 գյուղատնեսության համատարած հաշվառման տեղամասեր

Սա հիմնականում լոգիստիկայի կենտրոն է, որտեղ իրականացվելու են ծրագրերի հնարավոր ճշգրտումները:

ՀՀ ԱՎԾ 11 տարածքային գործակալություններ (ներառյալ Երևանը)

Մեկ այլ լոգիստիկայի կենտրոն, որտեղ պետք է հավաքագրվեն բոլոր հարցաթերթիկները և վերջապես, տեղափոխվեն Գյուղատնտեսության Համատարած հաշվառման կենտրոնական գրասենյակ Երևանում:

Գյուղատնտեսության համատարած հաշվառման վարչություն

Այստեղ տեղի կունենա ամբողջ տվյալների մուտքագրումը և վերջնական տվյալների վավերացումը: Հնարավոր է դիմել տարածքային գործակալություններին (և հետագայում նաև կազմակերպության նախորդ մակարդակներին) եթե առանձին հարցաթերթիկների հաստատման անհրաժեշտություն լինի:

Թվինինգ ծրագրի աշխատանքը ընթանում է նախատեսված ծրագրի համապատասխան:

Արդեն պատրաստ է նաև հարցաթերթիկի նախագիծը: Գյուղատնտեսության վերաբերյալ հիմնական հարցերը կընդգրկվեն նաև Հայաստանի մարդահամարի հարցաշարում, որը տեղի կունենա 2011 թվականի Հոկտեմբերի 12-21-ը, այս հարցերը նաև փորձարկվել են փորձնական մարդահամարի ժամանակ, տես՝ բաժին 2.4.

2.3 ԵՄ և այլ միջազգային փորձը

ԱՊ Բաղադրիչի ղեկավարի կողմից ներկայացվեց ԵՄ երկրներում Գյուղատնտեսության համատարած հաշվառման ընդհանուր հատկանիշները: ԵՄ տնտեսության կառուցվածքի հետազոտությունները, և հետևաբար նաև ԳՀՀ ընդգրկված են ԵՄ 1166/2008 կանոնակարգում: Մասնավորապես, շնորհանդեսը կենտրոնացած էր հիմնական սահմանումների վրա, շեմերի սահմանման եղանակի, հիմնական վարչական տվյալների ընդունման, հաշվետու ժամանակաշրջանի, տվյալների փոխանցման և մեթոդաբանական զեկույցի և ներառված բոլոր տեսակի փոփոխականների վրա:

Ի լրումն, ԵՄ 1200/2009 կանոնակարգը կանոններ է սահմանում թե ինչպես պետք է կիրառել վերը նշված 1166/2008 կանոնակարգը: Ձեռնարկը, որը շարունակաբար արդիականացվում է դա կանոնակարգի հետագա լրացումն է: Շնորհանդեսը ներառված է սույն զեկույցի Հավելված Դ4.2.10 –ում:

Պրն. Մայքլ Ստայները՝ ԱՄՆ ԳԴ ի ներկայացուցիչը, ներկայացրեց գյուղատնտեսության համատարած հաշվառման ընդհանուր միջազգային հեռանկարները և Հայաստանում գյուղատնտեսության վիճակագրության բարելավման հնարավորությունները՝ գյուղատնտեսության համատարած հաշվառման իրականացման միջոցով, այսինքն՝ հիմք է ստացվում վիճակագրական ֆերմերային ռեգիստրի համար և ներկայացվում են ժամանակակից ընտրանքային հետազոտությունները: Նա նաև նշեց Միացյալ Ազգերի Կազմակերպության Գյուղատնտեսության Վիճակագրական Նախաձեռնությունները: Շնորհանդեսը ներառված է սույն զեկույցի Հավելված Դ4.2.11-ում:

2.4 Հայաստանում փորձնական Մարդահամարից ստացված փորձը

Շնորհանդեսներ ներկայացվեցին նաև Գեղարքունիքի և Տավուշի մարզի տարածքային գրասենյակների ներկայացուցիչների կողմից: Փորձնական մարդահամարը իրականցվել է այս մարզերում:

Մեկ կարևոր փորձն այն է, որ շատ տնային տնտեսություններ չէին ցանկանում տեղեկություններ տրամադրել գյուղատնտեսության գործունեությունների վերաբերյալ: Դրա համար կան մի շարք տարբեր պատճառներ՝

- Հողատարածքների վերաբերյալ գիտելիքի պակաս
- Կադաստրային տեղեկատվության պակաս
- Հստակ սահմանման պակաս կապված նրա հետ, թե ինչ պետք է ներկայացվի
- Ռիսկի գիտակցում, որ տվյալները կարող են կիրառվել հարկային նպատակներով
- Ռիսկի գիտակցում, որ կարող են զրկվել ֆինանսական աջակցությունից

Նշվեց, որ կարևոր է պարզաբանել ռեսպոնդենտների համար այն փաստը, որ տվյալները միայն օգտագործվելու են վիճակագրական նպատակների համար: Հարցերից մեկն է նաև այն, թե ինչպես պետք է վարվել այն հողատարածքների հետ, որը պատկանում է տնային տնտեսությանը մեկ մարզում, սակայն (մասամբ) գտնվում է մեկ այլ Մարզում:

Ընդհանուր առմամբ, ԳՀՀ արդյունքների հետ կապված կան մեծ ակնկալիքներ, քանի որ համայնքները ներկայումս տրամադրում են տվյալներ տարածքային վիճակագրական գրասենյակներին `օգտագործելով հին մեթոդներ այսպես կոչված համայնքային գրքեր, որոնք լիովին հուսալի չեն:

Մայքլ Ստայները իր շնորհանդեսում (տես 2.3) նաև ներառել էր իր եզրակացությունները կապված փորձնական մարդահամարի պատասխանների վերլուծությունների հետ: Նա նշեց փորձնական մարդահամարում գյուղատնտեսության վերաբերյալ հարցերի ընդգրկման առավելությունները, ինչպես նաև տեղեկացրեց հնարավոր խնդիրների վերաբերյալ՝ կապված տվյալների համապատասխանության և դիտարկումների այն բաց թողումների հետ, որոնք կարող են արդյունք հանդիսանալ ինչպես հարցերի սխալ ընկալման, այնպես էլ պարզապես կարող են լինեն տպագրական սխալներ տվյալների մշակման ժամանակ: Այս խնդիրների պատճառները ենթակա են հետագա ուսումնասիրման:

2.5 Խմբակային քննարկումներ կոնկրետ հարցերի վերաբերյալ, որոնք կարևոր են ԳՀՀ հաջող իրականացման համար

Քննարկումները կազմակերպվել էին չորս խմբերում, որտեղ յուրաքանչյուր խումբ պետք է զբաղվեր ԳՀՀ առնչվող որևէ կոնկրետ հարցի քննարկմամբ: Թեմաները հետևյալն էին՝

> Որոնք են գյուղատնտեսության վերաբերյալ հարցերը ԲՄ-ի հարցաշարում ներառելու ուժեղ և թույլ կողմերը:
> Ինչպես իրազեկել մարդկանց և ռեսպոնդենտներին ԳՀՀ կարևորության և դրական վերաբերմունքի վերաբերյալ:
> Ինչպես պետք է ապահովել ԳՀՀ պատասխանների որակը:
> Ինչպես պետք է վարվել ԳՀՀ տվյալների թերի ներկայացման հետ:

<u>Առաջին հարցի</u> համար հեշտ էր գտնել մի շարք ուժեղ կողմեր կապված գյուղատնտեսության հարցերը ԲՄ-ում ներառելու հետ՝ ստանալ գյուղատնտեսության ընդհանուր պատկերը, հնարավորություններ ԲՄ ընթացակարգերը և լոգիստիկային առնչվող հարցերը կրկնօրինակելու կամ վերակիրառելու համար և ԳՀՀ հարցաշարում հարցադրումների ձևակերպումը բարելավելու առումով: Նշվեց, որ դժվարություններից մեկն այն է, թե ինչպես պետք է վերաբերվել այն հողատարածքի հետ, որը չի մշակվում ընդհանրապես կամ այդ հողը մշակվում է մեկ այլ անձի կողմից, որը գտնվում է տվյալ տնտեսությունից դուրս:

<u>Երկրորդ հարցի</u> վերաբերյալ, որը վերաբերվում էր թե ինչպես պետք է իրազեկել մարդկանց և ռեսպոնդենտներին ԳՀՀ վերաբերյալ, ամենակարևոր եզրակացությունն այն էր, որ պետք է ձեռք բերել ռեսպոնդենտների վստահությունը: Որպես ԳՀՀ կարգախոս կարելի է ընտրել հետևյալը՝<<ԳՀՀ առավել կհեշտացնի ձեր կյանքը>>: Անհրաժեշտ է նաև ներգրավել պատկառելի մարդկանց լուսաբանման գործընթացում, ինչպես նաև նշվեց ֆերմերների խնդիրների վերաբերյալ տեղեկացվածության անհրաժեշտությունը:

<u>Երրորդ հարցի</u> վերաբերյալ, թե ինչպես պետք է ապահովել պատասխանների բարձր որակը, նշվեց հստակ հասկացությունների, սահմանումների և հրահանգների անհրաժեշտությունը և փորձարկումը: Հնարավոր է դիտարկել տնտեսություններին

օրացույցների ներկայացման հարցը, որը նրանց կօգնի մտապահելու փաստացի մշակաբույսերի վերաբերյալ տեղեկատվությունը և այլն:

Ինչ վերաբերվում է չորրորդ հարցին, թե ինչպես պետք է հասկանալ ԳՀՀ, նշվեց որ կարևոր են ԳՀՀ օպտիմալ ժամկետները, անհրաժեշտ է ունենալ հստակ ձևակերպված հարցեր, աշխատակիցների և հաշվարարների բավարար վերապատրաստում (մարդիկ, որոնք պետք է ունենան բավարար գիտելիքներ տեղական համայնքների վերաբերյալ և գիտակցեն գաղտնիության ապահովման հայեցակարգերը և այլն), օգտագործվեն բոլոր գովազդային ռեսուրսները և կիրառել միջազգային փորձը՝ տվյալների թերի ներկայացման դեպքերի վերաբերյալ:

Քննարկումների հարցերը և արդյունքները ներառված են սույն զեկույցի Հավելված 4.2.6-ում:

Ընդհանուր առմամբ, ԱՊ փորձագետների գնահատականն այն է, որ տարածքային գրասենյակների աշխատակիցներն ունեն ընդհանուր պատկերացում և լավ գիտակցում են հաջող ԳՀՀ իրականացման հետ կապված բոլոր խնդիրները: Տարածքային գրասենյակի աշխատակիցները ասյուհետև շարունակաբար կտեղեկացվեն Թվինինգ ծրագրի շրջանակներում ԳՀՀ պլանավորման հետ կապված աշխատանքների վերաբերյալ:

2.6 Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ

Առանձին հանդիպում կազմակերպվեց նաև ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ԱՄՆ ԳԴ և Թվինինգ ծրագրի ներկայացուցիչների հետ, որի նպատակն էր քննարկել հանդիպումները համապատասխան նախարարությունների հետ՝ կապված ԳՀՀ իրականացման բյուջեյին առնչվող հարցերի հետ: Նախատեսվում է հանդիպում ունենալ ՀՀ փոխվարչապետի հետ Նոյեմբերի 14-18 ընկած ժամանակահատվածում, և մեկ այլ հանդիպում ունենալ Դեկտեմբեր ամսին ՀՀ Գյուղատնտեսության նախարարության հետ: Առաջին հանդիպումը կկազմակերպվի ՀՀ ԱՎԾ-ի կողմից, սակայն հաջորդ հանդիպման նախաձեռնությունը կկազմակերպվի ԱՄՆ ԳԴ-ի և ԵՄ-ի կողմից համատեղ, որն էլ կտրամադրի ռազմավարական փաստաթուղթ հանդիպման համար:

2.7 Գյուղատնտեսության համատարած հաշվառման աշխատանքային ծրագրի թարմացում

Սույն առաքելության շրջանակներում նաև իրականացվեց ԳՀՀ բաղադրիչի աշխատանքային ծրագրի թարմացում (նախորդ զեկույցը, հավելված Դ2.5): Ներկայիս ծրագրի համաձայն ԳՀՀ վերաբերյալ հարցազրույցները պետք է իրականացվեն 2012 թվականի տարեվերջում: Տես Հավելված Դ4.2.7

2.8 Հաջորդ գործունեության Տեխնիկական առաջադրանքի կազմում, Դ3

Սույն բաղադրիչի հաջորդ առաքելությունը՝ Դ3, կենտրոնացված կլինի հիմնականում հարցաթերթիկների, հրահանգների, հասկացությունների և սահմանումների վրա (Դ.2 առաքելության շարունակությունը), ինչպես նաև կզբաղվի ԳՀՀ իրականացման լոգիստիկային առնչվող հարցերով: Գյուղատնտեսության նախարարությունը, տարածքային գործակալությունները, և ֆերմերների համապատասխան

կազմակերպությունները պետք է ներգրավված լինեն: Հետևյալ աշխատանքները օգտակար կլինեն իրականացնել նախքան հաջորդ առաքելությունը՝

- Փորձնական ԲՄ-ի զեկույցի թարգմանությունը հայերեն լեզվով
- Անգլերեն լեզվով ունենալ ԲՄ-ի 66 հրահանգների առնվազն վերնագրերը (հետագայում դրանց մի մասը, որոնք կարևոր կհամարվեն ԳՀՀ համար, ամբողջությամբ կթարգմանվեն անգլերեն)
- Փորձնական ԲՄ –ի աղյուսակների թարգմանություն անգլերեն լեզվով
- ՀՀ ԱՎԾ կներկայացնի սահմանումների նախագծային տարբերակներ և կտրամադրի մեկնաբանություններ դրանց վերաբերյալ
- ՀՀ ԱՎԾ կներկայացնի մեկնաբանությունների/հրահանգների նախագիծ ԳՀՀ հարցաթերթիկի տարբեր բաժինների վերաբերյալ
- ՀՀ ԱՎԾ կներկայացնի նախնական ռազմավարություն ԳՀՀ –ի համար շեմերի սահմանման վերաբերյալ:

ԱՊ փորձագետները կտրամադրեն Սերբիայում և Մոլդովայում իրականացրած գյուղատնտեսության համատարած հաշվառման ժամանակ հաշվարարներին տրված հրահանգները՝ համեմատություններ կատարելու համար:

3. Եզրակացություններ և առաջարկներ

Սեմինարը հաջող իրականցվեց: Տարածքային գրասենյակների մասնակիցները բավականին իրազեկված էին թե ինչպիսի խոչընդոտներ կարող են ակնկալվել ԳՀՀ իրականացման ժամանակ և առաջարկեցին մի շարք գաղափարներ, թե ինչպես պետք է դրանք հաղթահարել:

Համախմբելով այս տեղական և կենտրոնացված գիտելիքները և փորձը միջազգային փորձի հետ, ինչպես նաև կիրառելով ԲՄ-ի լավագույն փորձը (ներառյալ փորձնական մարդահամարը) բավարար հիմքեր կստեղծվեն ԳՀՀ պլանավորման համար: Առաջարկվում է, որ տարածքային գրասենյակների աշխատակիցները նույնպես ներգրավված լինեն ԳՀՀ պլանավորման առաջիկա գործընթացներում:

Հավելված Դ.4.2.1 Տեխնիկական Առաջադրանք

Գործունեություն Դ4.2 Վերապատրաստման դասընթաց Գյուղատնտեսության համատարած հաշվառման վերաբերյալ

1. Գործունեության նպատակը

Գործունեության նպատակն է ներգրավել մարզային վիճակագրական գործակալություններին գյուղատնտեսության համատարած հաշվառման համար անհրաժեշտ պլանավորման և հետագա իրականացման աշխատանքների մեջ: Սա կիրականացվի երկօրյա վերապատրաստման սեմինարի ընթացքում, որին կմասնակցեն բոլոր մարզային գործակալությունները: Ավելին, գործունեության ընթացքում կարդիականացվի աշխատանքային ծրագիրը և ԳՀՀ –ին առնչվողդ հնարավոր խնդիրները կքննարկվեն ՇԵ փորձագետների հետ:

2. Ակնկալվող արդյունքը

Գործունեության ակնկալվող արդյունքներն են՝

- Գյուղատնտեսության Համատարած հաշվառման աշխատանքային ծրագրի/ժամանակացույցի արդիականացում
- Մարզային վիճակագրական գործակալությունների համար նախապատրաստված վերապատրաստման սեմինարի մասնակցություն
- Գյուղատնտեսական հետազոտությունների մասին ԵՄ կանոնակարգի ներկայացում (գյուղատնտեսական համատարած հաշվառում);
- Հաջորդ Դ3 գործունեության համար տեխնիկական առաջադրանքի քննարկում

3. Ծրագրի մասնակիցները

Պրն. Գագիկ Անանյան, Վիճակագրության պետական խորհրդի անդամ (ՇԵ բաղադրիչի ղեկավար)
Պրն. Արսեն Ավագյան, Գյուղատնտեսական վիճակագրության բաժնի պետ

Պրն. Ռոլֆ Սելանդեր, Գլխավոր խորհրդատու, Շվեդիայի վիճակագրական ծառայություն (ԱՊ բաղադրիչի ղեկավար)

Արտաքին շահառուներ
Պրն. Մայքլ Ստեյներ, Գլխավոր խորհրդատու, ԱՄՆ-ի գյուղատնտեսության դեպարտամենտ, Միջազգային ծրագրերի գրասենյակ
Պրն. Լևոն Գյուլկասյան, Գյուղատնտեսության մասնագետ, ԱՄՆ-ի գյուղատնտեսության դեպարտամենտ, Կովկասի գյուղատնտեսության զարգացման ծրագիր

Հավելված Դ.4.2 ԱՊ փորձագետների հանդիպման ծրագիրը

4. ՇԵ Փորձագետների հանդիպման ծրագիր Սեպտեմբերի 22-24 , 2011

Ժամը	**Վայրը**	**Միջոցառում**	**Նպատակ/Միջոցառման մանրամասները**
Հինգշաբթի սեպտեմբերի 22 առավոտյան	Կոնգրես Հյուրա-նոց	Հանդիպում ԹՄԽ-ի հետ	Գործունեության ծրագրի քննարկում
Կեսօր	ՀՀ ԱՎԾ	Հանդպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և փորձագետ-ների հետ	Բաղադրիչի առկա կարգավիճակը-զարգացումներ Դ2 գործունեությունից հետո: Աշխատանքային ծրագրի արդիականացում: Դ 3 գործունեության նախապատաստում:
Որբաթ, սեպտեմբերի 23 առավոտյան	Չկալով-կա, Սևան	Վերապատ-րաստման սեմինար	Մարզային վիճակագրական գործակալությունների համար նախապատրաստված երկօրյա սեմինարի մասնակցում: Գյուղատնտեսական հետազատությունների վերաբերյալ ԵՄ կանոնակարգի ներկայացում
Շաբաթ, սեպտեմբերի 24 առավոտյան	Չկալով-կա, Սևան	Վերապատ-րաստման սեմինար	Մարզային վիճակագրական գործակալությունների համար նախապատրաստված երկօրյա սեմինարի մասնակցում:Ամփոփում, մարզային գործակալությունների մասնակցությունը աշխատանքներին:.
Կեսօր	ՀՀ ԱՎԾ	Ամփոփում ՇԵ նախագծի ղեկավարի հետ	Եզրահանգումներ և առաջարկություններ: Աշխատանքային ծրագրի հնարավոր վերանայում: Հաջորդ Դ3 գործունեության համար տեխնիկական առաջադրանքի քննարկում:

Հավելված Դ.4.2.3 Անձինք, որոնց հետ հանդիպումներ են տեղի ունեցել

1. Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ Նախագահ
2. Գագիկ Անանյան, ՀՀ Վիճակագրության Պետական Խորհրդի անդամ
3. Թոմաս Բի, ՀՀ ԱՎԾ Թվինինգ Ծրագրի մշտական խորհրդատու
4. Անահիտ Սաֆյան, ՀՀ ԱՎԾ Միջազգային վիճակագրության համագործակցության բաժնի պետ
5. Արսեն Ավագյան, ՀՀ ԱՎԾ Գյուղատնտեսության բաժնի պետ
6. Լևոն Դավթյան, ՀՀ ԱՎԾ Արարատի մարզային գործակալության պետ
7. Վրեժ Մանուկյան, Լոռու մարզային գործակալության պետ
8. Գայանե Մակարյան, Արմավիրի մարզի տարածքային գործակալության գլխավոր մասնագետ
9. Վրեժ Ավետիսյան, Երևան քաղաքի գործակալության բաժնի պետ
10. Ռուբիկ Համբարձումյան, Լոռու մարզային գործակալության բաժնի պետ
11. Լաուրա Գրիգորյան, ՀՀ ԱՎԾ Գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ
12. Գեորգի Թորոսյան, ՀՀ ԱՎԾ Տրանսպորտի և կապի բաժնի պետ
13. Ռուզաննա Վարդանյան, ՀՀ ԱՎԾ Գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ
14. Իշխան Սարգսյան, Արմավիրի մարզային գործակալության պետ
15. Կարապետ Դեղոյան, ՀՀ ԱՎԾ Գեղարքունիքի մարզային գործակալություն
16. Ամալյա Բաբաջանյան, Սյունիքի մարզային գործակալության պետ
17. Վլադիմիր Գրիգորյան, Սյունիքի մարզային գործակալության պետ
18. Առուշան Ղազարյան, Վայոց Ձորի մարզային գործակալության պետ
19. Վահրամ Մուրադյան, Արարատի մարզային գործակալության գլխավոր մասնագետ
20. Անահիտ Մարգարյան, Շիրակի մարզային գործակալության ամփոփ բաժնի պետ
21. Լևիկ Մովսիսյան, Արագածոտնի մարզային գործակալության պետ
22. Արտակ Հայրապետյան, Արագածոտնի մարզային գործակալության առաջատար մասնագետ
23. Վահագն Դավթյան, Կոտայքի մարզային գործակալության պետ
24. Մարինե Ստեփանյան, Կոտայքի մարզային գործակալություն
25. Վահե Ճաղարյան, ՀՀ ԱՎԾ Գյուղատնտեսության բաժնի առաջին կարգի մասնագետ
26. Վարդան Արևշատյան, ՀՀ ԱՎԾ Գյուղատնտեսության բաժնի առաջատար մասնագետ
27. Արամ Քյոսեյան, ՀՀ ԱՎԾ Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության գլխավոր մասնագետ
28. Հակոբ Բաղալյան, ՀՀ ԱՎԾ Գեղարքունիքի մարզային գործակալության պետ
29. Հովհաննես Ուրումյան, ՀՀ ԱՎԾ Շիրակի մարզային գործակալության գլխավոր մասնագետ
30. Աիդա Աչինյան, ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության պետ

Ռոլֆ Սելանդեր, Շվեդիայի Վիճակագրության փորձագետ
Մայքլ Ստայներ, ԱՄՆ Գյուղդեպարտամենտի փորձագետ
Լևոն Գյուլխասյան, ԱՄՆ Գյուղդեպարտամենտի մասնագետ

Հասմիկ Շահբազյան, Գեղարքունիքի մարզպետարան
Գագիկ Ստեփանյան, Գեղարքունիքի փոխմարզպետ

ԶԼՄ
Սուրեն Բարսեղյան, Գեղամա հեռուստաընկերության տնօրեն
Գայանե Մանուկյան, STV 1 հեռուստաընկերության լրագրող
Վահրամ Ոսկանյան, STV 1 հեռուստաընկերության օպերատոր
Էլինա Մելիքյան, ԵՄ Տեղեկագիր
Մարինա Ղուկասյան, ԵՄ Տեղեկագիր
Տաթևիկ Բաբայան, ԵՄ Տեղեկագիր

Հավելված Դ.4.2.4 Մամուլի հաղորդագրություն վերապատրաստման սեմինարի վերաբերյալ, Սեպտեմբերի 23-24, 2011

Մամուլի հաղորդագրություն

Երևան Սեպտեմբեր 2011

ԵՄ Վերապատրաստման սեմինար ՀՀ գյուղատնտեսական համատարած հաշվառման վերաբերյալ

Գյուղատնտեսությունն ունի կարևոր նշանակալից դեր Հայաստանի տնտեսության և հանրության համար: Արդի փուլում հրատապ խնդիր է գյուղատնտեսական ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալների ամբողջական համակարգի ձևավորումը:

Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) աշխատանքներ է իրականացնում գյուղատնտեսական համատարած հաշվառում կազմակերպելու և անցկացնելու ուղղությամբ: Գյուղատնտեսական համատարած հաշվառման վիճակագրական արդյունքները կբարելավեն գյուղատնտեսական հատվածի հետագա զարգացմանն ուղղված անհրաժեշտ տեղեկատվական բազաները և գիտելիքները:

Գյուղատնտեսական համատարած հաշվառման և դրա ծրագրավորման ընթացքի մասին տեղեկատվություն ներկայացնելու նպատակով "Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը" Թվինինգ ծրագրի ներքո՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկա գյուղում 2011 թ. սեպտեմբերի 23-24-ը կանցկացվի վերապատրաստման սեմինար:

Գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում տվյալները հավաքագրվում են հողատարածքների, անասնաբուծության, սարքավորումների, մարդկային և ֆինանսական ռեսուրսների կառավարման և այլնի վերաբերյալ: Գյուղատնտեսական համատարած հաշվառումը հիմք կհանդիսանա գյուղացիական տնտեսությունների վիճակագրական ռեգիստրի ձևավորման համար, այդպիսով՝ բարելավելով ընթացիկ կարճաժամկետ վիճակագրությունը: Ավելին, գյուղատնտեսական համատարած հաշվառումը կբարելավի նաև մի շարք այլ ոլորտների վիճակագրությունը, օրինակ՝ աղքատություն և պարենային անվտանգություն և այլն:

"Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին" ՀՀ օրենքը մշակվել է միջազգային փորձագետների հետ համագործակցության արդյունքում և ընդունվել է 2008թ., համաձայն որի գյուղատնտեսական համատարած հաշվառումներն իրականացվում են 10 տարին մեկ անգամ: Հայաստանում առաջին գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման լավագույն տարբերակը կլինի 2012 թ., հաշվի առնելով 2011 թ. հոկտեմբերին իրականացվելիք մարդահամարի ներուժի օգտագործման հնարավորությունը:

Գյուղատնտեսական համատարած հաշվառումն իրականացնելիս չափազանց կարևոր է առաջնորդվել միջազգայնորեն ընդունված և առաջարկվող մեթոդաբանություններով ու հիմնադրույթներով: Այս պահանջը ապահովելու համար՝ Գյուղատնտեսական համատարած հաշվառումը կիրականացվի Եվրոպական միության և ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտի, ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպության փորձագետների հետ համագործակցությամբ:

Վերապատրաստման սեմինարը կազմակերպվում է ՀՀ ԱՎԾ մարզային վիճակագրական գործակալությունների համար, որին կմասնակցեն նաև ՀՀ ԱՎԾ կենտրոնական գրասենյակի ներկայացուցիչները, Դանիայի և Շվեդիայի վիճակագրական ծառայությունների ու ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտի փորձագետները: Սեմինարը բաց է ներկայացնելու հանրությանը գյուղատնտեսական համատարած հաշվառման կարևորությունը և ընթացիկ ծրագրերը:

Երկամյա “Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը” ԵՄ Թվինինգ ծրագիրը նպատակաուղղված է հարմոնիզացնելու Հայաստանյան մի շարք վիճակագրական ոլորտներ Եվրամիության ստանդարտների հետ:

Ժամը	11:30; 2011 թ. սեպտեմբերի 23
Վայրը	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Չկալովկա, “Բուրգեր” հ/տ

Հավելված Դ4.2.5 Վերապատրաստման սեմինարի ծրագիրը

Սեպտեմբերի 23-24, 2011

Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

Հայաստանում գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման նախապատրաստում

Վերապատրաստման սեմինար մարզային վիճակագրական գործակալությունների համար
2011 թ. Սեպտեմբերի 23-24, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Չկալովկա, „Բուրգեր”

Նախնական ծրագիր

Որբաթ, սեպտեմբերի 23

11:00–11:30 Ժամանում և գրանցում

11:30–13:00 Նիստ 1 – Ողջույնի խոսք

Պրն. Ս. Մնացականյան՝ Գյուղատնտեսական համատարած հաշվառման կարևորությունը
ԵՄ Պատվիրակություն՝ ԵՀՔԳ ծրագիր Հայաստանի համար
Պրն. Գ. Անանյան՝ Առկա իրավիճակը և գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման ծրագրերը

13:00–14:00 Ընդմիջում

14:00–15:30 Նիստ 2 – Գյուղատնտեսական համատարած հաշվառման միջազգային փորձը

Պրն. Ռ. Սելանդեր՝ ԵՄ կանոնակարգը գյուղատնտեսական հետազոտությունների մասին (գյուղատնտեսական համատարած հաշվառում)
Պրն. Մ. Սթեյներ:Միջազգային փորձը և առաջարկությունները
Պրն. Ա. Ավագյան: Հիմնադրույթները և սահմանումները

15:30–15:50 Սուրճի ընդմիջում

15:50–17:15 Նիստ 3 – Փորձը և այլ հեռանկարները մարզային մակարդակում

Տկն. Աչինյան՝ Տավուշի մարզային գործակալության պետ

Պրն. Բաղալյան. Գեղարքունիքի մարզային գործակալության պետ
Քննարկումներ

17:30–19:30 Հանգստի ծրագիր

20:00 Պաշտոնական ընթրիք

<u>Շաբաթ. Սեպտեմբերի 24</u>

08:00–09:00 Նախաճաշ

09:00–10:45 Նիստ 4 – ՀՀ գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման հստակ մեթոդաբանությունը

Պրն. Ա. Ավագյան Հարցաշարը և հրահանգները
Խմբակային քննարկումներ և լիագումար նիստ

10:45–11:15 Սուրճի ընդմիջում

11:10–13:00 Նիստ 5 – Հաղորդակցում և համագործակցության գործիքներ

Պրն Գ. Անանյան՝ Ինչպես օպտիմալացնել հաղորդակցման հոսքը
Խմբակային քննարկումներ և լիագումար նիստ

13:00–14:00 Ընդմիջում

14:00–15:00 Նիստ 6 –Սեմինարի փակում

Պրն. Ս. Մնացականյան՝ Ամփոփում, եզրահանգումներ և հարցերի համաձայնեցում

Հավելված Դ4.2.6 Հարցեր խմբակային քննարկումների համար Սեպտեմբերի 23-24, 2011 իրականացված վերապատրաստման սեմինարի ժամանակ

Սեմինարի մասնակիցները բաժանվեցին չորս խմբերի, որոնցից յուրաքանչյուրը քննարկում էր ստորև նշված հարցերից մեկը:

Խումբ 1
Որոնք են գյուղատնտեսության վերաբերյալ հարցերը բնակչության Մարդահամարի հարցաշարում ընդգրկելու ուժեղ և թույլ խողմերը:
- Ինչպես պետք է վերաբերվել դրանց հետ:

<u>Ուժեղ կողմերը.</u>
- ԲՄ տրամադրում է լավ հիմքեր ԳՀՀ համար
- Քանի որ հարցերը գյուղատնտեսության վերաբերյալ առանձին են, ֆերմերները իրենց առավել <<կարևորված>> հհամարեն
- Գյուղատնտեսության հարցերը (հոգեպես) կնախապատրաստեն ֆերմերներին ԳՀՀ համար
- ԲՄ –ի լոգիստիկայի ապահովումը կարող վերակիրառվել ԳՀՀ մեջ
- ԲՄ –ի փորձը պետք է օգտագործվի ընթացակարգերի և հարցերի սահմանումների բարելավման համար

<u>Թույլ կողմերը</u>
- Որոշ հարցերին դժվար կլինի պատասխանել, մասնավորապես ոչ-ֆերմերի կողմից վարվող հողեր կամ հողեր, որոնք մշակվում են տնտեսությունից դուրս գտնվող անձի կողմից: Այս հարցին պետք է վերաբերվել ճշգրիտ և գործառնական հարցերի միջոցով:

Խումբ 2
Ինչպես պետք է բարձրացնել իրազեկությունը մարդկանց շրջանում կապված գյուղատնտեսական համատարած հաշվառման իրականացման կարևորության հետ:

- Ձեր կարծիքը, թե ինչպես պետք է մարդկանց տեղեկացնել գյուղատնտեսական համատարած հաշվառման վերաբերյալ:

- Մարդիկ (և ռեսպոնդենտները) պետք է ունենան վստահություն ԳՀՀ ի վերաբերյալ
- Հասարակության հետ կապը ԳՀՀ ի վերաբերյալ շատ կարևոր է բարձր որակի արդյունքներ ստանալու համար
- ԳՀՀ պետք է գովազդվի զանգվածային լրատվամիջոցների և արդի տեխնոլոգիաների միջոցով, ինչպիսիք են տեքստային հաղորդագրությունները
- Որպես ԳՀՀ կարգախոս կարելի է համարել հետևյալը <<Գյուղատնտեսության համատարած հաշվառումը առավել կհեշտացնի ձեր կյանքը>>
- Գովազդը պետք է իրականացվի պատկառելի մարդկանց միջոցով

- Անհրաժեշտ է նաև ներգրավել պատկառելի մարդկանց լուսաբանման գործընթացում, ինչպես նաև նշվեց ֆերմերների շրջանում խնդիրների վերաբերյալ տեղեկացվածության անհրաժեշտությունը
- Գովազդային արշավը պետք է լինի պատկառելի և ցույց տա ընդհանուր իրազեկության ընդհանուր իրավիճակը ֆերմերների շրջանում, ներառյալ այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են պարարտանյութերի, թունաքիմիկատների, տեխնոլոգիաների օգտագործումը, ապահովագրության և ոռոգման հարցեր
- ԳՀՀ պետք է համապատասխան լինի եզակի ֆերմերին
- Ֆերմերները պետք է գիտակցեն ԳՀՀ կարևորությունը և սխալ պատասխանների հետևանքները:

Խումբ 3

Որ գործիքները արդյունավետ կլինեն կիրառելու համար (ընդհանրացված սահմանվում են որպես ծրագրային փաթեթներ, հարցազրուցավարների վերապատրաստման միջոցներ, հրահանգներ, ընթացակարգեր և այլն)՝ որպեսզի ապահովվի գյուղատնտեսական համատարած հաշվառման հարցերի պատասխանների բավարար որակը:

- Ինչպես կարող եք կազմել (նախագծել) այս գործիքները

- Ճշգրիտ և գործառնական հասկացությունները, սահմանումները և հրահանգները շատ կարևոր են
- Հարցաթերթիկի փորձարկում՝ ինչպես դաշտային փորձարկումները, այնպես էլ փորձնական ԳՀՀ պետք է իրականացվեն
- Անհրաժեշտ է ինտենսիվորեն կիրառել միջազգային փորձը
- Անհրաժեշտ է մշակել հատուկ աղյուսակներ հարցազրուցավարների համար
- Կարելի է դիտարկել ֆերմերներին <<օրացույցի>> տրամադրման գաղափարը, որը հնարավորություն կտա մտապահելու մշակաբույսերի քանակը և այլն, որպեսզի նրանք կարողանան տալ ճշգրիտ պատասխաններ
- Հասարակայնության հետ կապերը պետք է օգտագործվեն ընդհանուր հանրության շրջանում իրազեկությունը բարձրացնելու համար

Խումբ 4

Որոնք են գյուղատնտեսական համատարած հաշվառման մեջ տվյալների թերի ներկայացման պատճառները:

- Ինչպես կարող եք հասցեագրել տվյալների թերի ներկայացումը:
- 1. Ինչպես կարելի է խուսափել տվյալների թերի ներկայացումից:
- 2. Եթե այնումենայնիվ այս երևույթը տեղի է ունենում, ինչպես կարելի է բացահայտել այն:

- ԳՀՀ հարցերը պետք է հստակ և ճշգրիտ ձևակերպված լինեն
- Պետք է հաշվի առնվեն ԳՀՀ օպտիմալ ժամկետները, հաշվի առնելով սեզոնային գործոնները
- Աշխատակազմի և հաշվարարների վերապատրաստում

- Հաշվարարները պետք է լինեն մարդիկ, որոնք բավարար գիտելիքներ ունեն տեղական համայնքների վերաբերյալ
- Հաշվարարները պետք է հասկանան և կարողանան բացատրել զաղտնիության ապահովման հայեցակարգը
- Անհրաժեշտ է իրականացնել ԳՀՀ ինտենսիվ գովազդային արշավ
- Անհրաժեշտ է կիրառել միջազգային փորձը թերի տեղեկատվության տրամադրման վերաբերյալ
- Տվյալների թերի ներկայացման մեկ կոնկրետ կասկածի դեպքում, անհրաժեշտ է իրականացնել կրկնակի ստուգումներ:

Հավելված Դ4.2.7 Գյուղատնտեսության համատարած հաշվառման Բաղադրիչ Դ-ի աշխատանքային ծրագիր

Նախադրյալներ

- Բնակչության մարդահամարը (ԲՄ) ինչպես նախատեսվում էր իրականացվել է 2011 թվականի Հոկտեմբերի 12-21-ը:
- ԲՄ-ի տվյալների մուտքագրումը և վավերացումը նախատեսված է ավարտել 2012 թվականի Հունիսի 30-ին:
- Փորձնական Գյուղատնտեսության համատարած հաշվառման (ԳՀՀ) ֆինանսավորումը ապահովված կլինի 2012 թվականի Մարտի 30-ը
- ԳՀՀ ֆինանսավորումը ապահովված կլինի 2012 թվականի Սեպտեմբերի 1-ին:
- Ենթակառուցվածքները (համակարգչային տեխնիկան, անձնակազմի հավաքագրման գործընթացը և այլն) կարելի է վերաօգտագործել ԲՄ-ից

Նպատակը /գործունեությունը (ծանոթագրություն)	**Վերջնաժամկետը**	**Թվինինգի գործունեությունը**
Ռազմավարության մշակում (1)	Մարտ 2011, Մայիս 2012	Դ.1, Դ.2
Տարածքային գրասենյակների ներգրավում (1)	Սեպտեմբեր 2011	Դ.4.2
Հարցաթերթիկի մշակում և ընդունում (5)	Մայիս 2011, Նոյեմ.2011	Դ.2,Դ.3
ԳՀՀ վերջնական (դինամիկ) բյուջեն (7)	*Փետրվար 2012*	
Հարցաթերիկների առաջին դաշտային փորձարկումները (մոտ 25 հարցազրույցներ)	*Փետրվար 2012*	
Հաշվարարների հրահանգների մշակում (5)	Նոյեմ. 2011, Մարտ 2012	Դ.3, Դ.4 (վերապատրաստում)
Համատարած հաշվառման լոգիստիկա և կազմակերպում (7)	Նոյեմ. 2011, Մարտ 2012	Դ.3, Դ.4 (վերապատրաստում)
ԳՀՀ գովազդային արշավի մշակում (8)	Մարտ 2012	Դ.4 (վերապատրաստում)
Համակցություն և շեմեր	Մարտ 2012	Դ.4 (վերապատրաստում)
Հարցաթերթիկների դաշտային փորձարկման 2 րդ փուլը (մոտ 25 հարցազրույցներ)	*Ապրիլ 2012*	
Փորձնական ԳՀՀ –ի անձնակազմի հավաքագրում և հրահանգներ	*Ապրիլ 2012*	
ԳՀՀ փորձնական հաշվառման տվյալների	*Մայիս 2012*	

հավաքագրում/մշակում (13,14)		
Մարդահամարի արդյունքները, ԳՀՀ համակցություն և շեմեր	Օգոստոս 2012	Դ.5 (ուսուցողական այցելություն)
ԳՀՀ փորձնական հետազոտության գնահատում և արդյունքներ (14)	Օգոստոս 2012	Դ.5 (ուսուցողական այցելություն)
Հարցաթերթիկների վերջին ճշգրտումները և հրահանգները	Օգոստոս 2012	Դ.5 (ուսուցողական այցելություն)
Աշխատակազմի հավաքագրում և հրահանգավորում ԳՀՀ –ի համար (16-18)	*Հոկտեմբեր 2012*	
ԳՀՀ տվյալների հավաքագրում (19)	*Նոյեմբեր 2012 (4 շաբաթ)*	
Հետագա աշխատանքներ և ընթացքի գնահատում	*Նոյեմբեր 2012*	Դ.6
Տվյալների մուտքագրում, վավերացում և այլն (20-26) *Նախնական արդյունքներ (27)* *Վերջնական արդյունքներ և տարածում (30)*	*Դեկտեմբեր 2012-Մարտ 2013* *2013 ամռանը* *2014 գարնանը*	

Հավելված Դ1.7բ –ին վերաբերվող թվեր (գործողությունների ցանկ ՀՀ ԱՎԾ ի/ԱՄՆԳԴ կողմից)

Թվինինգ ծրագրի ժամանակահատվածում իրականացվող գործողություններ (առաքելություններ)

Դ.1	Մարտ 2011	Իրավիճակի գնահատում
Դ.2	Մայիս 2011	Պլանավորում և հաշվետվության ձևը
Դ.4.2	Սեպտեմբեր 2011	Վերապատրաստման դասընթաց տարածքային գրասենյակների համար
Դ.3	Նոյեմբեր 2011	Իրականացման աջակցություն
Դ.4.1	Մարտ 2012	Վերապատրաստում (տարածքային ասպեկտներ)
Դ.5	Օգոստոս 2012	Ուսուցողական այց Դանիայի վիճակագրություն
Դ.6	Նոյեմբեր 2012	Թվինինգի բաղադրիչի իրականացման ընդհանուր ուսումնասիրում